ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1627

26.04.2016թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի ապրիլ ամսին այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի բաժնի ՁՊՎ արձանագրել էր հետևյալ հիմնախնդիրը, որ ՁՊՎ ընդունված անձանց համար անհրաժեշտության դեպքում հրավիրված շտապ օգնության բժիշկների կողմից կատարված գրառումները և բժշկի կողմից նշանակված հետագա անհրաժեշտ բուժօգնություն ցույց տալու վերաբերյալ գրառումները ՁՊՎ վարչակազմի կողմից չի կատարվում: Օրինակ՝

<<Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժզննության>> գրանցամատյանի 23 և 24 համարների ներքո կատարված գրառումները, որ բժշկի կողմից խուրհրդ է տրվում հետագայում տրամադրել X դեղորայքը, չի իրականացվել:

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏԻՑ № 2187
03 05 2016թ.

Թերություն՝

Քննչական սենյակում գտնվող աթոռը պոկված էր հատակից:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացվածը և տալ մեկնաբանություն:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՏԻՑ ԹԻՎ 2814
2 05 2016թ.

Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60,
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

0025 ք.Երևան, Նալբանդյան 130, Հեռ.՝ (010) 59-65-94, Ֆաքս՝ (010) 59-63-11, էլ.փոստ staff@police.am

№ 2/2-1-1902 «24» 05 2016թ.

Ձեր 26.04.2016թ. թիվ 2621/1627 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2016թ. ապրիլի 11-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տարոնի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության վերաբերյալ հաշվետվությունում նշված հանգամանքը և թերությունն ուսումնասիրվել է ՀՀ ոստիկանության շտաբում և Լոռու մարզային վարչությունում:

ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն ներկայացվում է ներքոշարադրյալ մեկնաբանությունը.

Ձերբակալված Կ.Դ.-ին մարտի 23-ին ժամը 15.35-ին ցուցաբերվել է անհրաժեշտ բուժօգնություն և բժշկի կողմից <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանի 23-րդ հերթական համարի ներքո կատարվել է համապատասխան գրառում, որտեղ նշել է, որ երեկոյան խորհուրդ է տրվում ընդունել <<Նո-Շպա>> տեսակի 2 դեղահաբ: Ձերբակալված Կ.Դ.-ի ինքնազգացողությունը երեկոյան լավացել է, այդ իսկ պատճառով էլ նա հրաժարվել է իրեն առաջարկած դեղահաբերը ընդունելուց:

Ինչ վերաբերվում է նույն գրանցամատյանի 25-րդ հերթական համարի տակ (և ոչ թե 24, ինչպես նշված է Ձեր հաշվետվության մեջ) ձերբակալված Է.Ե-ին գլխացավի, կոկորդի ցավի և գրիպոզ վիճակի պատճառով դեղորայք նշանակելուն (<<Պարացետամոլ>> և քթի կաթիլներ), ապա նշված դեղորայքը բժշկի ներկայությամբ առաջարկվել է ձերբակալվածին, սակայն վերջինս հրաժարվել է այն ընդունել:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ոստիկանության Տարոնի բաժնի ՁՊՎ-ի քննչական սենյակի աթոռի չամրացված լինելու փաստը դարձվել է քննարկման առարկա, համապատասխան աշխատակիցները նախազգուշացվել են, իսկ թերությունը՝ վերացվել:

ՀՀ ոստիկանության շտաբ